

Յարե կան գին 4. Պոլսոյ հար 8 ՄԷՃ
Յարե կան գին 4. Պոլսոյ հար 10 ՄԷՃ
Յարե կան գին 4. Պոլսոյ հար 4 ՄԷՃ
Յարե կան գին 4. Պոլսոյ հար 3 ՄԷՃ
Յարե կան գին 4. Պոլսոյ հար 60 ՄԷՃ
Յարե կան գին 4. Պոլսոյ հար 3 ՄԷՃ
Յարե կան գին 4. Պոլսոյ հար 2 ՄԷՃ
Յարե կան գին 4. Պոլսոյ հար 1 ՄԷՃ



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳՈՅՏԱՆԴԵՐՈՐԴ 10 ՅՈՒՆԻԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայէն եկած վերջին լուրերէն նայելով, Անտրապի կոմիտէն առաջարկած բարենորոգմանց վերաբերեալ ծանուցադրին հիւսիսային երեք մեծ տէրութեանց հաւանութիւնն ստանալէ ետեւ Անգլիոյ Գաղղիոյ և իտալիոյ կառավարութեանց հաւանութեանը ներկայացուեր, և այս վերջիններէն իտալիոյ կառավարութիւնն ալ արդէն իւր հաւանութիւնն յայտնեւ է, իսկ Անգլիոյ և Գաղղիոյ կառավարութեանց տուած պատասխանը դեռ որոշապէս յայտնի չէ, Բայ ամենց՝ այս երկու կառավարութիւնք միմեանց հետ բանակցութեան մտեր են՝ համարձակուիլով որ տարու համար, ուրիշ թղթակցութիւնք ալ կըսեն թէ հինգ մեծ տէրութիւնք անպայմանաբար հաւանութիւն տուեր են, միայն Անգլիոյ ապագային մէջ գործելու աղատութիւնը վերապահելու պայմանաւ հաւանութիւն տուեր է:

Եթէ այս վերջին լուրն ստույգ է, ապա արդէս չմնայ որ Անտրապի կոմիտէն ծանուցադրին Եւրոպական կառավարութիւն մ'առաջած կըլլայ: Այլ հիմա երեք տէրութիւնք միայն չեն որ առաջարկեալ բարենորոգմանց և խաղաղացումն ծրագրին վրայ խորհրդակցելու կոչուած են, այլ վեց երաշխաւոր տէրութիւնք խորհուրդ և կարծիք պիտի տան արդէն որոշեալ սկզբանց վրայ, և վերջնական համաձայնութեան մը հասնին:

Վիեննայէն դուրս շարժուած նամակի մը խօսքին նայելով, Ռուսիոյ վախճանն այս է եղեր որ հիւսիսային երեք տէրութեանց դեպքաններն յիշեալ բարենորոգմանց ծրագրերը զատ զատ Բ. Դրան ներկայացնեն, և արեւմտեան տէրութեանց դեպքաններն ալ զանոնք ընդունելու խորհուրդ տան Բ. Դրան:

Գաղղի Պ. Անտրապի ծանուցադրին պարունակութեանը, լրագրաց տուած տեղեկութիւնները սոսկ ենթադրութիւնք են: Ստույգ երեւցածն այս է, որ պատրաստեալ առաջնորդութիւնք ծանր բան մը չեն պարունակեր, ոչ ալ երաշխաւորութեան կամ հսկող յանձնաժողովոյ խօսք կընեն: Վարձիք կայ հոս, կըսեն վերջիններս, թէ այս գործը պարզապէս ձախող ամիսներն ըզբաղեցնելու սահմանաւ է. զի միւս կողմէ Անտրապի մէջ զինուորական պատրաստութիւնք օր քան զօր կարեւորութիւն կ'առնան: Վիեննայի մէջ և ուրիշ տեղեր զանազան համայն

պահեստի զօրաց հրաման եղաւ որ պատրաստ կենան, և իրենց ազգարարութիւն եղածին պէս մինչև 48 ժամ իրենց գունդերուն հետ երթան միանան: Անտրապի թղթատարութեանց տնօրէնութիւնն ալ զինուորական թղթատարութիւն մը կազմելու համար հարկ եղած ամեն միջոցները ձեռք առաւ: Ասոնցմէ զատ զինուորական մէջ ալ կարգէ դուրս փութաշատութիւն կայ: 670 գործաւոր աւելի բռնուեցաւ, և քանի մ'օրէն դարձեալ 950 գործաւոր պիտի բռնուի:

Նոյն նամակը կը ծանուցանէ նաև թէ Գաղղիոյ իշխանութիւնը թուրքիոյ դէմ բացօթեայ թշնամական դիրք մը բռնած է: Թուրքաց վաճառք առնէ և ուրիշ որ և է գործանոց հետ ընելի արգելքը: Անտրապի հպարտակցի Միւս կողմէն Լուքսեմբուրգի արգելքը որ Գաղղիոյ հիւսիսային սահմանին մօտ Անտրապի մը միջնորդացն ուղեց, ապառազներու կը պարտի Ռուսիոյ փողոցներուն մէջ: Յիւսուի խիստ տարօրինակ չէզոքութիւն մ'է այս: Վերջին օրերս Գաղղիոյ զինուորական գործոց նախարար Պ. իլիա Բլամէնք մեր քաղաքն եկաւ վանդէլ կոչուած հին հրացաններ դրնելու, որք 1866էն ետեւ վրտուեցան, և որոց տեղ յետոյ վէրնտէլի հրացաններն անցան:

Անգլիոյ լրագրերը ալ Անտրապի ծանուցադրին կամ մանաւանդ ծրագրին մէջ պարունակեալ առաջարկութեանց վերջին ծայր չափաւոր ըլլալը կը հաստատեն, բայց թուրքիոյ ներքին գործերուն միջամտութեան նախապիտիւնը մը համարելով խրատ կուտան Անգլիոյ որ դաշնագրութեանց պահպանութիւնը միայն պահանջէ, և Դրան անկախութիւնն ամեն բարեկարգութեանց և օգտակար բարենորոգմանց հիմնը կ'առնէ:

Սակայն վերջին հեռագրաւոր մը կը ծանուցանէ թէ Անգլիոյ կառավարութիւնն Անտրապի կոմիտէն ծանուցադրին ընդհանուր կերպիւ ուժ տալու որոշում ըրեր է. յորմէ կը հետեւի թէ Անգլիոյ ալ ընդունելու է յիշեալ ծանուցադրին սկզբունքը:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 19 յունիւ
Կառավարութիւնը Մարտիոյ մէջ ի պատիւ Պ. Կամպիլի արուելքը կոչուեցն արդիւնք: Հետեւեալ Պ. Կամպիլի թալ փարիզ վերադարձաւ:
Երեւոյ տակաւն ընտրութեանց համար եօթն զաւառք Պոնտարթեան փոխանորդներ ընտրեցին: Ընտրութեանց արդիւնքը ծանուցուած 50 դաւառաց 366 սրահ

պատկան փոխանորդներ ընտրած են: Մեծ անհամբերութեամբ կ'սպասուի ընտրութեանց արդիւնքին:

Փարիզ 19 յունիւ
Փոխանորդաց ընտրութիւններուն արդիւնքն եղաւ 65 դաւառաց մէջ 50 սրահ պատկան, 3 ընդգիւծաւոր և 12 երկրային:

Պ. Էրնէս Բիքառ ձախարհեալով վաղը մասից օրինաց նկատմամբ կ'առաջարկութեան հարցում պիտի ընէ միայն յանձնաժողովոյ մէջ:

Պարիզ 19 յունիւ
Պաշտօն իւր դարձաւորէն չ'արժեքն իւր ինքն:

Մարտի 19 յունիւ
Կը հաւաստեն թէ Գաղղիոյ ծրագրի մէջ զօրացեալ կառավարութեան հիմնադրէն է:

Լոնտոն 19 յունիւ
Նախարարաց խորհուրդն որոշեց ընդհանուր կերպով ուժ տալ Անտրապի կոմիտէն ծանուցադրին, բայց ծանուցադրին տրուելէն ետեւ երեան երաժ թաղման ժամանակ խնդիրներն յետոյ պիտի քննուին:

Փարիզ 20 յունիւ
Միայն յանձնաժողովոյ մէջ Պ. Պիլիքէ ձախարհեալով պատասխանելով ընտրական խորհուրդեանց վրայ վիճաբանել յանձն չ'առաւ, և մասից վերաբերեալ օրինաց առաջին մեկնութիւնը պիտի դրնէ ընտրութեան ժամանակ զատական տեսանկերը կը վճեն:

Պ. Տը Լա Ռօշէ, որ վերջին օրերս ծերակուտի անդամ ընտրուած էր, մեռաւ:

Լոնտոն 20 յունիւ
Թայմզ լրագրին Անտրապի ծանուցադրին ընդհանուր կերպիւ ուժ տալու մասին Անգլիոյ ըրած որոշման վրայ խօսելով կըսէ թէ ամեն բան այնք է անկեղծաբար նկատի բարենորոգումներն ապահովելու, և միանգամայն անվտանգ պահելու այն սկզբունքը թէ Օտմանեան տէրութեան ներկայ հոգին ոչ մի մասը պէտք չէ օտար տէրութեան մը ձեռքն անցնի: Թայմզ կուգայ թէ ընաւ պատճառ մը չունի կարծելու թէ Անտրապի իւր սկզբանց չ'համաձայնող փոփոխութեան մը կը հետեւի:

Մակաուի յայտարարութեան լրագրերը չ'արժեքն իւր կառավարիչ անուանեցաւ:

Մեծ Բոնո.	19 43/46
Բոնո.	24
» 1869	22 1/2
» 1871	36
» 1872	37
» 1873	22 1/8
Երկրպետ.	64 8/16
Անգլ. Բոնո.	93 43/46

Լիվերպուլ 20 յունիւ
Բաւարիոյ Միտլինկ—Օրէն 7
» Զարի Տօլէրաճ 4 3/8
Ծախսուած 14000 հազ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԵՏՏՈՒԿԱՆ ՁԵՆՈՒՅՈՒՄՆ
Կայսերական կառավարութիւնը վերջին ժամանակներս հրատարակ-

Պ. Բաւարացի լրագրաց հանդէս ծախքը թաղաքային տես կ'ըսուի: Լրագրաց վերաբերեալ ծանուցադրումը որ եւ ինչ գրութիւն թաղաքային Տօլէրաճի պիտի ուղղուի, և Պ. իւս Վինիլի խան, Մարտի գրասենյակը չ'ամբողջացնէ իր ծախքը: Զամբու ծախքը չ'զմարտած ծախքը չ'ընդունուիր:



Եւրոպայէն եկած վերջին լուրերէն նայելով, Անտրապի կոմիտէն առաջարկած բարենորոգմանց վերաբերեալ ծանուցադրին հիւսիսային երեք մեծ տէրութեանց հաւանութիւնն ստանալէ ետեւ Անգլիոյ Գաղղիոյ և իտալիոյ կառավարութեանց հաւանութեանը ներկայացուեր, և այս վերջիններէն իտալիոյ կառավարութիւնն ալ արդէն իւր հաւանութիւնն յայտնեւ է, իսկ Անգլիոյ և Գաղղիոյ կառավարութեանց տուած պատասխանը դեռ որոշապէս յայտնի չէ, Բայ ամենց՝ այս երկու կառավարութիւնք միմեանց հետ բանակցութեան մտեր են՝ համարձակուիլով որ տարու համար, ուրիշ թղթակցութիւնք ալ կըսեն թէ հինգ մեծ տէրութիւնք անպայմանաբար հաւանութիւն տուեր են, միայն Անգլիոյ ապագային մէջ գործելու աղատութիւնը վերապահելու պայմանաւ հաւանութիւն տուեր է:

Եթէ այս վերջին լուրն ստույգ է, ապա արդէս չմնայ որ Անտրապի կոմիտէն ծանուցադրին Եւրոպական կառավարութիւն մ'առաջած կըլլայ: Այլ հիմա երեք տէրութիւնք միայն չեն որ առաջարկեալ բարենորոգմանց և խաղաղացումն ծրագրին վրայ խորհրդակցելու կոչուած են, այլ վեց երաշխաւոր տէրութիւնք խորհուրդ և կարծիք պիտի տան արդէն որոշեալ սկզբանց վրայ, և վերջնական համաձայնութեան մը հասնին:

Վիեննայէն դուրս շարժուած նամակի մը խօսքին նայելով, Ռուսիոյ վախճանն այս է եղեր որ հիւսիսային երեք տէրութեանց դեպքաններն յիշեալ բարենորոգմանց ծրագրերը զատ զատ Բ. Դրան ներկայացնեն, և արեւմտեան տէրութեանց դեպքաններն ալ զանոնք ընդունելու խորհուրդ տան Բ. Դրան:

Գաղղի Պ. Անտրապի ծանուցադրին պարունակութեանը, լրագրաց տուած տեղեկութիւնները սոսկ ենթադրութիւնք են: Ստույգ երեւցածն այս է, որ պատրաստեալ առաջնորդութիւնք ծանր բան մը չեն պարունակեր, ոչ ալ երաշխաւորութեան կամ հսկող յանձնաժողովոյ խօսք կընեն: Վարձիք կայ հոս, կըսեն վերջիններս, թէ այս գործը պարզապէս ձախող ամիսներն ըզբաղեցնելու սահմանաւ է. զի միւս կողմէ Անտրապի մէջ զինուորական պատրաստութիւնք օր քան զօր կարեւորութիւն կ'առնան: Վիեննայի մէջ և ուրիշ տեղեր զանազան համայն

պահեստի զօրաց հրաման եղաւ որ պատրաստ կենան, և իրենց ազգարարութիւն եղածին պէս մինչև 48 ժամ իրենց գունդերուն հետ երթան միանան: Անտրապի թղթատարութեանց տնօրէնութիւնն ալ զինուորական թղթատարութիւն մը կազմելու համար հարկ եղած ամեն միջոցները ձեռք առաւ: Ասոնցմէ զատ զինուորական մէջ ալ կարգէ դուրս փութաշատութիւն կայ: 670 գործաւոր աւելի բռնուեցաւ, և քանի մ'օրէն դարձեալ 950 գործաւոր պիտի բռնուի:

Նոյն նամակը կը ծանուցանէ նաև թէ Գաղղիոյ իշխանութիւնը թուրքիոյ դէմ բացօթեայ թշնամական դիրք մը բռնած է: Թուրքաց վաճառք առնէ և ուրիշ որ և է գործանոց հետ ընելի արգելքը: Անտրապի հպարտակցի Միւս կողմէն Լուքսեմբուրգի արգելքը որ Գաղղիոյ հիւսիսային սահմանին մօտ Անտրապի մը միջնորդացն ուղեց, ապառազներու կը պարտի Ռուսիոյ փողոցներուն մէջ: Յիւսուի խիստ տարօրինակ չէզոքութիւն մ'է այս: Վերջին օրերս Գաղղիոյ զինուորական գործոց նախարար Պ. իլիա Բլամէնք մեր քաղաքն եկաւ վանդէլ կոչուած հին հրացաններ դրնելու, որք 1866էն ետեւ վրտուեցան, և որոց տեղ յետոյ վէրնտէլի հրացաններն անցան:

Անգլիոյ լրագրերը ալ Անտրապի ծանուցադրին կամ մանաւանդ ծրագրին մէջ պարունակեալ առաջարկութեանց վերջին ծայր չափաւոր ըլլալը կը հաստատեն, բայց թուրքիոյ ներքին գործերուն միջամտութեան նախապիտիւնը մը համարելով խրատ կուտան Անգլիոյ որ դաշնագրութեանց պահպանութիւնը միայն պահանջէ, և Դրան անկախութիւնն ամեն բարեկարգութեանց և օգտակար բարենորոգմանց հիմնը կ'առնէ:

Սակայն վերջին հեռագրաւոր մը կը ծանուցանէ թէ Անգլիոյ կառավարութիւնն Անտրապի կոմիտէն ծանուցադրին ընդհանուր կերպիւ ուժ տալու որոշում ըրեր է. յորմէ կը հետեւի թէ Անգլիոյ ալ ընդունելու է յիշեալ ծանուցադրին սկզբունքը:

վանդակից ինչ որ կրօնքը միայն միևնույն թարգմանի կարող է մատակարարել այսպիսի անհրաժեշտ արկածի մը մէջ : Խօսքն իր պարզութեանը մէջ լի զգացմամբ՝ ունէր այն գերազանց օժանդակը որ Սահարանը միայն կարող էր պաշտօնէն ինչ որ ներքոյ անմեղութեան և ի մը խիթարութեան ծնողաց :

Բայց ո՞վ կրնար բացատրել այն ըզրացումը, որ ինձ միայն սեպհակոն էր սպաննելու մէջ : Սենեքերիմէ ֆէհարին մեծ ծաղիկն պատկան ըրած է ինձ իւր սիրուն զաւակացը զատարկութեան օժանդակ հեղու հրաւիրելով արդ՝ մտքս չէր անցնէր երբեք թէ երախտագիտութեանս պարտքը, ըստ բաւականին, իրեն չի յայտնած՝ ցաւակցութեան պարտքը լիովին յայտնելու պիտի պարտաւորէի : Արամ, իմ սիրուն աշակերտս, իր հասակէն չատ վեր ուշիմութեամբ ասկից դեռ ութ օր առաջ կատարեալ առողջ վիճակի մէջ վերջի դասն առաւ ինձմէ : Բայց այժմ կարի իսկ համոզումս եմ, զքեզ բողբոջար, թէ յանգէտս իրմէ և յինչն, վերջին դասը նա ինձ տուաւ, անմոռանալի դաս խաբուսիկ յուսոյն պատանաց : և ես ահա նմանեցայ հաւատարիմ պարտիպատի մը, որուն ամենէն սիրելի մատաղ և ծաղիկայից ձեռատունը թշնամի հովէն խամրեցաւ :

Արդ ուրիշ բան չէ կարելի ինձ բայց մտղթել որ Նիքիլն չափ համարի իրեն նուիրումս անմեղ զոյնը, և այս կորուստը լիովին փոխանակէ՝ պահելով զարե միւս զաւակաց աղնուազդի գէրգատտանին, և այսպէս շնորհ վատեցաւ ծնողաց իրենց առաքինութեան արժանի մը խիթարութեանը :

Խնդրելով որ ձեր առաջիկայ թերթին մէջ բարեհաճիք դրութեանս անկիւն մը շնորհել, մնամ

Զերդ տիրազին
Յ. ՈՍԿԱՆ

ՊԱՐ ԵՒ ԿԱՐԱՆ

Ոստիւնը ի նշան ուրախութեան՝ մարդոց բնական շարժումներէն մին է, ինչպէս որ տղոց վրայ կը տեսնեմք այդ բանին օրինակը : Իսկ անկարգ ու անկանոն ոստիւնները կարգաւորեալ ձևի մը վերածել և միակերպելուն կըսուի պարել կամ կաքաւել :

Ըմենահեաւոր ժամանակներու պատմութեանց մէջ մարդոց պարերը կամ կաքաւելը կը յիշուի : Այսպէս իսրայելացիք Կարմիր ծովէն անցնելով փարաւոնի ձեռքէն ազատելուն վրայ ուրախութեան արք ու կանայք պար բռնելով խաղացին : Դարձեալ Յեփթայեայ գուստրն ասկէց 3112 տարի յառաջ իւր հօրը Ամիննացւոց դէմ տարած յաղթութեանն առթիւ իւր ուրախութեանը յայտնելու համար թմբուկ ի ձեռնին կաքաւելով դիմացը ելաւ : Ս. Դրոց մէջ ասոնցմէ յառաջ և ետքն ալ այսպիսի դէպքեր յաճախ յիշուած կան :

Բայց նախնիք միմիայն ի նշան ցնծութեան չէին պարել, այլ պարն ու կաքաւել իրենց կրօնական արարողութեանց և զինուորական կերթութեանց հետ ալ կը խառնէին : Իսրայելացիք ոսկի հորթը շինելէ ետեւ չորս բոլորը պար բռնած կը խնդային, Դաւիթ տապանակին առջեւ կը կաքաւէր, և այլն : Այս պարերը գրեթէ միշտ կը լայն ի ձայն երգոց և նա աղարարաց : Մեծածած հանդիսից առթիւ գոյժածուած նուագարանք կը յիշուին թմբուկ, աւաղ, քնար, փող ծնողայ և այլն, զորս մասնաւոր նուագածուք կը հրնչեցնէին : Իսկ մէկ հոգի Կաքաւելու ատեն, շնորհակալութեամբ ի մտուկ և սրինգ կը գործածուէր, զորս շատ անգամ կաքաւելին ինքը կը զարնէր, ինչպէս Յեփթայեայ աղջիկն, և Դաւ-

ւիթ որ կաքաւած ժամանակ միանգամայն քնար կը զարնէր :

Նոյնի Հայոց համար ալ պատմութեան մէջ կը կարգանք թէ մասնաւորապէս տարեգլխոյ կամ ամանորի առթիւ որ նաւասարդի մէկին կընկնէր, բոլոր ժողովուրդը մեծ ու պղծաբեր պար բռնելով կը խաղային ի ձայն նուագարանաց : ասոր համար ըսած է Մաքիաորոս :

« Ո՛ր տալը ինձ զաւառուն նաւասարդի . . . մեք փող հարուար և թմբուկ հարկանեալք : » Նմանապէս կարի հաւանական է որ Գողթան երգիչք ալ փանդուով երգած ատենն ինչ միանգամայն կը պարէին :

Կրօնական արարողութեանց ատեն պարելու և կաքաւելու սովորութիւնը մինչև ցարդ հեթանոս աղգաց մէջ կայ, ինչպէս ի Հնդկաստան և յԱլիքիկէ : Ժակրիմաթի հրեշտակաւոր կուռքին տօնախմբութեան օրը՝ Հնդկիկք թմբուկներն առջեւ թմբուկ և սրինգ զարնելով կը կաքաւեն : Նոյնպէս մեռելոց այրման հանդիսին մէջ ալ պարք և կաքաւք տեղի կունենան : Նմանապէս մեղ Տաճկաստանցւոցս ծանօթ Դաշնա կամ Մէշէշէ տեղիչներն, որոց արարողութեանց Պոյսեցոց շատեր հանդիսատես եղած են Բերայի հանրածանօթ արօթատեղւոյն մէջ, իրենց արարողութիւնքն ի ձայն նուագարանաց պարելով կը կատարեն, և այն աստիճան կը պարեն ու կը դառնան որ մինչև շնչապառ գետին կիլնան :

Պարին ուրախութեան բնական և ինքնաբեր շարժում մ'ըլլալուն գլխաւոր ազդեցողներէն մին ալ ամենէն բարբարոս և վայրենի ժողովրդոց վրայ ալ տեսնուիին է : Ամիւրիկայի Հոթենթոթներէն սկսեալ մինչև Ամերիկայի կարմիրմորթք և Ուլկիանայի վայրենիք միայն մէկ տեսակ զուարճութիւն մ'ունին, այն է պարել : Կը տեսնեն մարդակեր Բարայիպաց խումբ մը, որ մարդախոշոր խնձորք մը վերջը, տակաւին իւր նմանոյն խորովեալ ոսկերօտին վրան ծխող խաբուկին շուրջ պար բարդած կը խաղայ : Արդարեւ բոլոր վայրենեաց կեանքը կրնայ սա երեք բառերով սահմանուիլ : Կորեալ, Կորեալ, Կորեալ, երեք բան որք բնութեան այս նախնական ժողովրդոց մէջ ընկերականութեան միակ կապն և ի մի վայր համախմբուելու միակ պատճառը կը կազմեն, Զարմանալի համալըմանութիւն : Բայց միթէ մեր՝ քաղաքակրթեալ ազգաց՝ մէջ ալ այսպէս չ'է՞ արդեօք : Ո՛չ ապաքէն խնձորքներն ու պարահանդէսներն Եւրոպացւոց ինչպէս նաեւ մեր Բերաբնակ երիտասարդաց կենցաղակարութեան մէջ կարեւոր տեղ մը բռնած են :

Պարելու և կաքաւելու վրայօք խօսած ատենն իս չ'մոռնանք սա ալ յիշելու որ բոլոր միջին դարու մէջ և մինչև ժե՛ դարն Արեւմտեան եկեղեցւոյ քահանայք, եպիսկոպոսք և արքեպիսկոպոսք արտաքին հանդէսներու և աշխարհական զբօսանաց մէջ կը պարէին : Կոյնսթնտինոփոլիս թագադրութեան օրը որ յետոյ Հրեոյքաւորոս Գ ըսուեցաւ, այն է 1483 ին, Ուէսթմինսթրի աբբայարանին մէջ քահանայից կաքաւելը տեսնուեցաւ : Դաղդիոյ Լուտովիկոս ԺԲ ին 1501 թուականին Միլան քաղաքը տուած փառաւոր պարահանդէսներուն մէջ Նորբոնի և Սանտֆէրինոյի կարգիւնայնքը պարեցին : Բայց ասոնցմէ զայն անկողականը կայ : Տրիդենտեան եկեղեցական ժողովոյն պատմադիր Բալլաւիլինոյ կարգիւնալը կը պատմէ որ այս ժողովոյն հայրերը 1562 ին որոշեցին որ փրկագոս Բ-

Սպանիոյ թագաւորին մեծ պարահանդէս մը տան, որում հրաւիրուեցան նաեւ քաղաքին բոլոր տիկնայք և օրիորդք : Մանթուայի կարգիւնալը պարախումբին գլուխն անցաւ և ժողովոյն բոլոր եկեղեցական հայրք ալ թագաւորն ալ ի միասին պարեցին ու կաքաւեցին : Զարմանալի ժողով, զոր Սրեմոնեյք ընդ որս և մէր Հոգովմէական աղգայինք սուրբ և տիեզերական ժողով կը դաւանեն, և որ աշխարհային անպարկեշտ պարահանդիսի մը կը վերջանար : Մնաց որ այսպիսի գաղթականից իրողութիւնք արեւմտեան եկեղեցւոյ պատմութեան մէջ կը վիտան :

Ինչպէս յառաջ ալ տեսնենք, պարեն պարս Եւրոպացւոց սովորութեանց մէջ մտած և մասնաւորապէս բարձր ընկերութեանց գլխաւոր զբօսանքներէն մին դարձած է : Իբր մասնաւոր կրթութիւն դաս կը տրուի և զանազան կանոններ ունի, զորս գրեթէ ամեն Եւրոպացի երիտասարդք գիտեն : Արեւմտեան և արեւելեան գիտական հանդիսից մէջ յետ խնդրոյ առաջին տեղը կը բռնէ, յորում կայսերք և արքայք ալ շատ անգամ կը պարեն :

Բժշկական տեսութեամբ պարելը ֆիսիոկար բան մը չ'է, և եթէ տառապանական կանոնաց համաձայն կանոնաւորի, կրնայ մարմնոյ օգտակար մարդ մը ըլլալ : Դժբաղդարար մեր հիւսիսային պարահանդէսներն առ հասարակ այդ կանոնաց հակառակ հանգամանք ունին, որով շատ անձանց և մանաւանդ կանանց և օրիորդաց առողջութեանը կը վնասեն, և ասոր գլխաւոր պատճառներն ալ են Ա. բոլոր գիշերը շատ անգամ մինչև ի լոյս պարելը, վասն զի գիշերը մարդոյն հանգստութեան համար ստեղծուած է, և ուր քնոյ բքնական պէտքն որեւէ քամին սովորութեանց կը գոհէ, իւր առողջութեան կը վնասէ :

Բ. Պարասրահից մէջ գտնուած բազմութեան, ճրագներէն և այլ և այլ հոտերէն օդոյն ապականիլը, որով այդ օդոյն մէջ ժամերով կեցողներուն և մանաւանդ շրային փութիւկ կաղմութիւնն ունեցողաց, ինչպէս են կանայք, կը վնասէ :

Գ. Կանանց ընդհանրապէս սոյն պիտի հանդիսից մէջ զգեցած հանդերձներուն նեղութիւնն՝ որ կուրծքերնին սեղմելով շնչառութիւննին կը նեղէ, մինչդեռ պարած ժամանակ ամենէն տեսի պէտք ունին տղատ շնչառութեան : Դարձեալ շատին ալ կուրծքն և թեւերը կիտաւելի և հոյանի ըլլալը՝ պատճառ կը լայն որ ամենափոքր օդոյ հոսանքի մը եթէ հանդիսին անմիջապէս կը վնասին :

Դ. Եւ վերջապէս ընթերցել վերջը պարել և ստափիկ հոգնիլը : վասն զի կերակուրը դեռ չ'մարսած ինքզինք չ'ափազանց հոգնեցնելը խիստ ֆիսիոկար է առողջութեան : Գալով պարահանդիսաց բարոյական աղղեցութեանը, այդ մասին չեմք սխալել եթէ ըսենք որ նուազ ֆիսիոկար չէ երիտասարդաց և աղջիկանց բարոյականութեան՝ որչափ նոցա առողջութեան :

Վերջին ատեններս մեր մէջ ալ պարել սովորելու եռանդ մը տարածուեցաւ և շատ աղջկանց և մանչ տղայոց դպրոցաց մէջ ալ այժմ պար դաս կը տրուի : Ցաւալի է որ փոխանակ եւրոպացւոց դուլիլի յատկութիւնները մեր տղայոց տալու, նոցա աւանդած գիտելութիւններն և դաստիարակութեան մեթոտները մեր դպրոցաց յարմարեցնելու, աւելի դիւ-

րամէտ եմք նոցա՝ ոչինչ կամ պարստելի սովորութեանց հետեւելու :

Ե. Չ. Դ

Թաղական խորհուրդս պատիւ ունի ծանուցանել արդոյ աղգայնոց որ Ամեն խորհման սրբազան Հայրիկը վաղն առաւօտ Ս. Պատարագ պիտի մատուցանէ ի Սայր եկեղեցի : 10 յունի. 1876
Ի Խորհ. Սայր եկեղեցւոյ
Գումարաւոր

Ե. Չ. Դ

Նախընթաց թուով հրատարակուած «Կաղանդի նուէր» մակագրով յօդուածին մէջ «Կաղանդ» բառը «Կուռք» պէտք է կարգացուի :

ՏՕԲԹՕՐ Կ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Դարագ ճրար Պաշիկ դրան դուրսը՝ Սէրէթի խանին վարի յարկը թիւ 18 սենեակը՝ կիրակի օրու ընէ զատ ամեն օր ժամը 5 էն մինչեւ 9ը կը դառնի՝ գաղտ հիւանդները նախելու, եւ ուրախ օրերը ձրի կը նայի :

Ի Լ Ա Ն

Աստիւրի Շահանէ Նանը աղիզ խաբէսի տէրի մէնէրի հարցաթիւն տան սովորմանը իւզը մէջ մեծու օլան 100000 քըյէ քէփէյին էսմանը սիմ մէծիւթից 21 1/2 դրու շա օլարաք նագաէն վէ փէշինէն տաք դըլին մագ իւզը պէհէր քըյէսի 11 փարայա թալիպի Եօհէսինէն օլուպ իշպու Գեանաւնի տանի թուինին 12 ինճի փաղար իրթէսի կիւնի միւզա յիտէսի պիլ իճրա դարարը դաթիսի վերիլէճէկինտէն, իշթիրաւընա թալիպ օլանլարըն եէվմը մէղքիւրաէ Տարը Շուրայի աքքըլէ կէլմէլէրի : 7 Գեանաւնի Սանի 1875
Պապը Սէրաքքէրի

Խորիմեա ֆաղրիգայի հիւմայու Նի իլուն միւպայեա օլունաճագ օլան 500 քըյէտէն 600 քըյէյէ գատար Պէնկալ Զիլիտինին էսմանը մագպուս սէնէտինին վիւրուտինտէ մէթալիք օլարաք լալիլէ միւլինտէն հէվալէթէն վերիլմէք իւզը պէհէր քըյէսի 135 դրու շա թալիպի իւզէրինտէ օլուպ իշպու Գեանաւնի տանի թուինին 12ինճի փաղար իրթէսի կիւնի գաղարը դաթիսի վերիլէճէկինտէն, իթա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը մէղքիւրաէ Տարը Շուրայի աքքըլէ կէլմէլէրի : 7 Գեանաւնի տան 1876
Պապը Սէրաքքէրի

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐ ԸՆԹԵՐՈՍԱՆ ՄԱՆԿԱՆԾ

ՏԵՏՐԱԿ Ա. ԵՒ Բ.

Թորիմեա Գարեգին վարդապետ Աբրահամեանց

Դպրոցական տղայոց խիստ ախորժիկի եւ զուարճալի պարունակութեամբ այն ընթերցարանները պատկերազարդ՝ երկրորդ տպագրութեամբ ի լոյս ընծայուած, կը գտնուին Մէրճանը Մարգարեան թ. էֆէնդիի գրատունը : Գին առաջինը 2 զըյ եւ երկրորդին՝ 3 զըյ : Շատ թուով գնողաց զեղչով կը տրուի : Գաւառացւոց համար աւելի յարմարագոյն է թէ՛ ընդունիլ եւ թէ՛ ներկայով :

ԱՂԷՔՍԱՆԻՐԻ ՄԱՆԾՈՆԾ

ԽՕՍԵՑԱԿ

Թարգմանեալ ի ձեռն Զ. Երեւորդոյ Հիւրմիւղեան արքեպիսկոպոսի Նիքիտայ

Ի Միթարեան Ուրտէն Վենետիկ
Երէւն - Հարոյ

Դարուս նշանաւոր բանաստեղծներ
